

ST. GREGORY OF NAREK ARMENIAN CHURCH

666 Richmond Road  
Cleveland, Ohio  
44143. U.S.A.

Area Code 216—Tel. 381-6590

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ  
Գլխավէնտ, Օհայօ

25 Փետր. 82

Գերշ. Ս. Թորգոմ Արք. Մանուկեան .

Առաջնորդ,

ի նիւ Երզրայն .Ե.,

*Արքեպիսկոպոս*

Հետեւեալ հարցը որ կը պատկանի Քլիվլենտի Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյս, կը փափաքինք ձեր հոգածու եւ պատշաճ տնօրինութեան յանձնել:

Եկեղեցւոյս բարեհամբաւ կնքահայր եւ Հանգուցեալ Պատգամաւոր Տքթ. Գեղամ Կէօքճիեանի հոգւոյն համար դժբաղդաբար աղօթք չի մատուցուեցաւ յատենի ժողովոյ մեր 1981-ի Թեմական Պատգամաւորական Համաժողովին առիթով, հակառակ վերջին պահու մեր խնդրանքին՝ որ՝ ձեր կողմէ արտասանուած Հոգւոց-ին մէջ անոր անունը եւս յիշատակուէր, սակայն դուք արդէն սկսած էիք աղօթքի եւ դժբաղդաբար հանգուցեալին անունը չունէիք ի ձեռինն ի շարս միւս հանգուցեալ պատգամաւորներուն:

Նաեւ 79-րդ Տարեկան Թեմական Պատգամաւորական Ժողովի Ատենադրութեան մէջ կը պակսի անունը մեր հոգելոյս պատգամաւորին նախընթաց տարւոյն ընթացքին ի Տէր հանգած Թեմական պատգամաւորներու յիշատակութեան ցանկէն: Տքթ. Գեղամ Կէօքճիեան ի Տէր հանգաւ 26 Սեպտ 1980-ին:

Արդ, սոյն ակամայ զանցառումը վրդովում պատճառած է հանգուցեալին, այրիին՝ Տիկ. Ֆլորանս Կէօքճիեանի որ իր կարգին ներկայիս եկեղեցւոյս միակ Թեմական Պատգամաւորն է եւ բերուած է իմ ուշադրութեան՝ հարցին բարւօք կարգադրութեան համար:

Այսու ձերը Սրբազնութենէն խոնարհաբար պիտի խնդրէինք որ այս տարի նկատի առնուէր սոյն պարագան եւ հանգուցեալին անունը յիշատակուէր թէ՛ ձեր աղօթքին եւ թէ՛ նաեւ Պատգամաւորական Ժողովին Ատենադրութեան մէջ եւ մոռացումը այսպէսով դարմանուէր ընդ միշտ:

Կանխայայտ Ծնորհակալութեամբ,

Մնամք Ձերը Խոնարհ Աղօթակից,

*Ս. Տիրան Բհնյ.*  
Ս. Տիրան Բհնյ. Փափագեան, Հովիւ